

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԲԱՆՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը



Ձ Ե Կ Ո Ւ Յ Ց

ԹԵՄԱ _____ *Լեզվական տարածված սխալները և դրանց դեմ պայքարի եղանակները*
ՀԵՂԻՆԱԿ _____ *Սոնա Հարությունյան*

Քննարկվել, հավանության է արժանացել

մեթոդախառնման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____ :

Մեթոդախառնման նախագահ _____ *Մերի Դանիելյան*
(ստորագրություն) (ազանուն, անուն)

Տնօրենի տեղակալ _____ *Մերգեյ Ավանեսյան*
(ստորագրություն) (ազանուն, անուն)

Բովանդակություն

1. Ներածություն
2. Արտասանական սխալներ
3. Բառագործածության սխալներ
 - Վ ածանցի սխալ գործածությունը
4. Բառաձևի սխալներ
5. Քերականական կապակցության սխալներ
 - Հոլովառության սխալներ
 - Համաձայնության սխալներ
 - Մակաբույժ բառեր
6. Եզրակացություն
7. Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հաշվի առնելով հաղորդակցման ընթացքում խոսքային վթարների անխուսափելիությունը՝ մշտապես զգացվում է լեզվական սխալների դեմ պայքարի անհրաժեշտություն, ինչպես նաև արդյունավետ միջոցների ու եղանակների առաջարկությունների կարիք, որպեսզի հնարավոր լինի փոքրիշատե նվազեցնել լեզվական թերությունները: Ասվածից ենթադրվում է, որ այս խնդրի արծարծումը և դրա շուրջ մտորումներով հանդես գալը շարունակում է արդիական լինել:

Կարելի է լեզվական առավել տարածված սխալները դասակարգել՝ ըստ գործածության շրջանակների՝

- առօրյա խոսակցական լեզու,
- ՋԼՄ-ներ,
- հեռուստատեսություն,
- սոցիալական կայքեր,
- գրավոր խոսք:

Երկրայելի է՝ արդյոք բանավոր խոսքի²ց են վերոնշյալ մակարդակներ փոխանցվում լեզվական սխալները, թե՞², ընդհակառակը, հեռուստացույցից կամ ՋԼՄ-ներից են անցնում մարդկային հաղորդակցական լեզվին:

Մի բան պարզ է, որ լեզվական սխալների մասին բազմիցս բարձրաձայնվում է, Լեզվի կոմիտեի կողմից տարվում է պատշաճ գործունեություն՝ հորդորակների, լեզվական տարաբնույթ խաղերի, թեստերի և այլնի միջոցով, սակայն լեզվական սխալների առկա պատկերը կարծես քիչ է հուսադրող. նույն լատինատառ կիսագրագետ հայերեն հաղորդագրությունները, թերություններով լեցուն հայատառ գրությունները սոցկայքերում, որ ոչ միայն գայրույթ ու հիասթափություն են առաջ բերում, այլև ամոթ հայի՝ սեփական լեզվի հանդեպ այդչափ անհարգալից վերաբերմունքի:

«Աստվածների հետ հաղորդակցվելու միակ միջոցը հայերենն է»։ Բայրոնի այս խոսքերը սուկ ներբող չեն՝ ուղղված մեր լեզվին. սա պարտավորեցնող իրողություն է, մեծագույն պատասխանատվություն, նախասահմանում, գիտակցություն և դրանով պայմանավորված կեցություն: Խոսքը մարդուն բոլոր կենդանի արարածներից տարբերակելու գլխավոր առանձնահատկությունն է, մարդու զենքն ու ասպազենը:

Մենք խոսում ենք այն ամենի մասին, ինչ կա մեր ներաշխարհում, խոսում ենք այնպես, ինչպես մտածում ենք, ապրում ենք այնպես, ինչպես վաստակում ենք հոգևոր արժեքներ, որովհետև նյութական աշխարհում չկա բացառիկ այնպիսի արժեք, որը կկարողանա փոխարինել խոսքին. մեր լեզուն և խոսքը մեր կենսական ապահովության հավաստագիրն են, ապագայի մեր տեսլականը, մեր լինելիության երաշխիքը:

Հայ կրթօջախներում ուսուցանում ենք լեզու՝ սկսած I դասարանից՝ առանց բնավ հաջողելու, ինչու³... որովհետև երեխաների մեջ սերմանում ենք անբնական մի բան, որ առաջ է բերում լեզվի աղավաղում: Մեր դասագրքերը հեղեղված են հին, արդիականությունից հեռու գրական արտադրությամբ. Ոսկեդարով ընդամենը հպարտանում ենք՝ բավարավելով միայն ակնարկային մի քանի ժամերով, ժամանակակից գրականությունը մերժում ենք՝ պատճառաբանելով՝ չի դիմանում ժամանակի քննությանը, հանդուրժում ենք եթերի լեզուն՝ արագորեն յուրացնելով լեզվական ոչ օրինաչափ ձևերը, խաթարելով ձևի և բովանդակության ներդաշնակությունը: Հաղորդագրություններ գրում ենք լատինատառ, ինչ է թե խուսափենք ուղղագրական, կետադրական սխալներից: Եվ ունենք այն, ...ինչ այսօր հակահայկական է, հակազգային, անհանդուրժելի:

5-6-րդ դասարանում ուսուցանում ենք մայրենի՝ անդրադառնալով հնչյունաբանությանը, ուղղագրությանը և բառագիտությանը, 7-րդ դասարանում հապճեպ անդրադարձ ենք կատարում «Ձևաբանություն» բաժնին՝ մակբայը մերթ հանելով, մերթ վերադարձնելով, 8-րդում ուսուցանում

ենք պարզ նախադասություն, 9-րդում՝ բարդ նախադասություն՝ չմոռանալով բոլոր դասարաններում գործնական գրությունների մասին տեղեկատվություններով ծանրացնել ուղեղը. և ակամա հարց ես տալիս՝ ինչու որոշակի քարացած ձև ունեցող գրություններին 5-12-րդ դասարաններում այդքան ժամաքանակ է տրամադրվում, եթե կարելի է պարզապես քաղաքակիրթ աշխարհի պես ձևաթուղթը լրացնել և վերջ: Վերջապես, կյանքում, գիտության մեջ և արվեստում ձևը չպետք է լինի առաջնային, այլ բովանդակությունը:

Ավագ դպրոցում շարունակում ենք նույն կարգով՝ 10-րդ դասարանում՝ հնչյունաբանություն, բառագիտություն, բառարանագրություն, ոճաբանություն, 11-րդում՝ գրական լեզու և բարբառ, ձևաբանություն և շարահյուսություն, 12-րդ դասարանում՝ վերլուծական գրություններ, շարադրություն, ոճագիտություն: Գուցե չափավորել է պետք մեր պահանջները, ամեն ինչի անունը տալ դեռ չի նշանակում ճանաչել, արդյունքում ունենում ենք անունը կա, ամանում չկա՝ չափորոշիչներում ամրագրված եռաստիճան պահանջներ, հապճեպ հասցված դասագրքեր, հին մտածողությամբ դաստիարակված կրթող հանրություն, կամ նոր հովերով տարածված, նոր տեխնոլոգիաներով զինված երիտասարդություն, որ արժանավորապես վաստակել է ուսուցանելու իր իրավունքը՝ վավերացված դիպլոմով, և անհամբեր սպասում է ուսուցանելու իր հերթին, եթե բախտն իհարկե ժպտա, և ոտքը դպրոց ընկնի: Եվ երբեք չի մտածում, որ իր սովորածը այնքան հեռու է բուն հայերենից, որի բացառությունները գերազանցում են կանոնիկ օրինաչափություններին, և հերթական մի բացառություն էլ պիտի հիշենք օրինաչափությունը սերտելու համար: Այդ նույն ապագա ուսուցիչները ապագայում պիտի հայտնեն իրենց խիստ մտահոգությունը մայրենի լեզվի պաշտպանության մասին, բայց դասարանում քննարկեն դրվագներ հայկական նոր սերիալներից, որոնցում վթարված է հայերենը, որոնցում, ցավոք, լեզվական առումով բարձիթողի և թափթփված վիճակ է:

Անշուշտ, խոսքը լեզվի իրական դրսևորումն է, անհատական ստեղծագործություն: Սակայն դա չի նշանակում, թե խոսողն ազատ է և իրավունք ունի բառերի ու բառաձևերի հետ վարվելու, ինչպես կարող է: Լեզուն ունի բառագործածության, արտասանական, ձևաբանական, շարահյուսական միասնական ընդհանուր կանոններ, որոնք պարտադիր են բոլորի համար: Դրանք են պահպանում լեզվի միասնականությունը, ամբողջականությունը, ընդհանուրի համար մատչելիությունն ու հասանելիությունը: Եվ գեղեցիկ ու գրագետ է նրա խոսքը, ով կարողանում է վարպետորեն օգտվել լեզվի արտահայտչական հնարավորություններից՝ բառը գործածելով տեղին, ճաշակով, պահպանելով լեզվական կանոնները: Նույն իմաստի արտահայտման համար լեզուն ունի տարբեր միջոցներ, հնարավորություններ, բառային, ձևաբանական և շարահյուսական հումանիշներ, և լեզուն գործածողը դրանցից օգտվում է ըստ կարողության և ճաշակի, ըստ իրադրության և նպատակի:

Հիշենք լեզվաբան-ոճաբան Ռոզենտալի միտքը. «Կիրթ պետք է համարենք այն խոսքը, որն աչքի է ընկնում ազգային ինքնատիպությամբ, իմաստային ճշգրտությամբ, բառապաշարի համեստությամբ և բազմազանությամբ, քերականական կուռ կառուցվածքով, գեղարվեստական արտահայտչականությամբ: Բանավոր կիրթ խոսքը պետք է համապատասխանի ընդունված ուղղախոսական կանոններին, գրավորը՝ ուղղագրական և կետադրական կանոններին»:

Լեզվական կանոնների ոչ պատշաճ իմացությունը, բառիմաստի սխալ ընկալումը բերում են լեզվական, խոսքային վթարների: Դրանք լինում են տարբեր բնույթի՝ բառերի սխալ արտասանություն ու գրություն, բառերի անտեղի ու սխալ գործածություն, քերականական ձևերի ոչ ճիշտ կազմություն ու գործածություն, անհամաձայնություն, սխալ շարադասություն, հոլովաձևի կամ կապի ոչ ճիշտ ընտրություն, օտարաբանություն և այլն, որոնց պատճառով ասելիքը դառնում է անհասկանալի, ոչ ճիշտ, կորցնում է ազդելու ուժը:

Հետևաբար սույն աշխատանքը նպատակ ունի աջակցելու հայոց լեզվի մասնագետներին՝ պայքարելու լեզվական վերոնշյալ խնդիրների դեմ:

Առաջադիր նպատակից հետևում է, որ աշխատանքում խնդիր ենք դրել բացահայտելու արդի հայերենում արտասանական, բառագործածական, բառաձևերի և քերականական կապակցությունների կիրառման տարածված սխալները և որոշ դեպքերում ներկայացնելու այդ խնդիրների լուծման համար արդյունավետ եղանակներ:

Հետազոտության շրջանակներում կիրառվել են տեղեկատվության հավաքագրման երկու մեթոդներ՝ դիտում և փաստաթղթերի ուսումնասիրություն:

Արտասանական սխալներ

Լեզվական արտասանական սխալը բառի ոչ ճիշտ արտաբերումն է, որը հակասում է գրական լեզվի ուղղախոսական կանոններին: Ահա սխալ արտասանվող բառերի մի շարք, որին հաճախ կարելի է ականջալուր լինել.

Սխալ է	Ճիշտ է
քսանյերեք	քսաներեք
հինգերորդ	հինգերորդ
անյէնթակա	անէնթակա
անվօրակ	անօրակ
մաձյան	մատյան
վալէյբոլ	վոլէյբոլ
սեկտեմբեր	սեպտեմբեր

Բառագործածության սխալներ

Այս մասում փորձենք մատնանշել ու պարզաբանել դիտարկման առնված խոսքում և փաստաթղթերում նկատված բառագործածության առավել հատկանշական սխալները և դրանցից խուսափելու միջոցները:

Տարկետո՞ւմ, թե՞ տարեկետում: Իհարկե՝ տարկետում. նշանակում է որոշակի ժամանակով որևէ բանի հետաձգում: Բառը կազմված է *տար-* ածանցից, որ նշանակում է հեռու, դուրս և ունի այլ իմաստը, առկա է *տարօրինակ*, *տարակարծիք*, *տարածամ*, *տարակենտրոն* և այլ բառերում:

Մյուս բաղադրիչն է *կետ*, որ նշանակում է նաև *որևէ բան կատարելու սահման*: **Տարկետում** նշանակում է ուսուցումը այլ կետի տանել և կապ չունի *տարի* բառի հետ:

Բաժանվում կամ կիսվո՞ւմ է կարծիքը: Թեև տարածված, բայց հայկական լեզվամտածողությանը խորթ կազմություններ են: Կան դրանց հայերեն համարժեքները՝ առավել բարեհունչ և ճիշտ՝ *համակարծիք էմ*, *համամիտ էմ*, *համաձայն էմ*. ոչ թե *կիսում էմ քո վիշտը*, այլ՝ *վշտակցում էմ քեզ*, ոչ թե *կիսում էմ քո ելույթի մտքերը*, այլ *համաձայն էմ քո ելույթին*, *մտքերին*, կամ *հավանություն էմ տալիս*:

Հանդիսանալ բայը բավական գործածական բառ է հայերենում և ավելի շատ անտեղի, սխալ գործածվող բառ: *Հանդիսանալ* նշանակում է «լինել՝ հանդես գալ որպես, ներկայանալ իբրև» և, թողած իր իմաստը, հաճախ գործածվում է է էական բայի փոխարեն, ինչպես՝ «Ընթացիկ հանդիսանում է հայ արձակի նշանավոր դեմքերից մեկը», փոխանակ՝ Ընթացիկ հայ արձակի նշանավոր դեմքերից է:

Սխալ է **Հարցի էությունը կայանում է նրանում** նախադասությունը: *Կայանալ* նշանակում է տեղի ունենալ, կատարվել, այսինքն՝ կարող է կայանալ միջոցառումը, ժողովը, նիստը և այլն, բայց ոչ հարցի էությունը: Ոչ թե *Հարցի (բուն) էությունը կայանում է*, այլ *Հարցի (բանի) էությունն այն է*:

Է էական բայի կիրառությունների վրա ազդում են նաև **պատկանել** և **ներկայացնել** բառերը, այսպես՝ «Արտիստը» պատկանում է հայ արձակի լավագույն նմուշների շարքին: Կամ՝ *Դպրոցը իրենից ներկայանցում է ուսումնադաստիարակչական կենտրոն*, փոխանակ՝ «Արտիստը» *հայ արձակի լավագույն նմուշներից է*: Կամ՝ *Դպրոցը ուսումնադաստիարակչական կենտրոն է*:

Ոմանք այնպես շեշտված են արտասանում **ուրեմս**, **այսինքս**, ակամայից մտածում ես, որ ստացական հոդերը դրվում են՝ մատնանշելով բառերի՝ իրենց պատկանելը, այնինչ ուղղակի պետք է ասել՝ *ուրեմն*, *այսինքն*:

Ձևաբանական սխալներ: Դրանք բառերի քերականական ձևերի սխալ կազմություններն ու կիրառություններն են: Շատերը կարծում են, թե պատճառական բայերի անցյալ կատարյալի երկար ձևն է գրական, ուստի և ճիշտ, սակայն չեն գիտակցում, որ *ց*-երի կուտակումը լեզուն դարձնում է անբարեհունչ և լեզվական կանոնի տեսանկյունից սխալ կազմություն է: Այսպես՝ ոչ թե *հասկացրեցի, մոտեցրեցի, կորցրեցի, իջեցրեցի*, այլ՝ *հասկացրի, մոտեցրի, կորցրի, իջեցրի*, որովհետև այդ բայերի անցյալ կատարյալը կազմվում է բայերի անցյալ կատարյալի հիմքով և *-ի, -իր, -ո, -ինք, -իք, -ին* վերջավորություններով:

Վերաբերել, թե՛ վերաբերվել: Սրանք թեև տարբերվում են *վ* ածանցով, սակայն ի տարբերություն այլ բառերի՝ իմաստով տարբեր են, և մեկի փոխարեն մյուսը գործածելը սխալ է: *Վերաբերել* նշանակում է *պատկանել, հարաբերել*. խոսքը վերաբերում է բոլորին, ասածը վերաբերում է քեզ: *Վերաբերվել* նշանակում է *վերաբերմունք ցուցաբերել, վարվել* և սովորաբար վերաբերում է անձերին, այսինքն՝ իրը չի կարող վերաբերվել: Օրինակ՝ *Հայրը վատ է վերաբերվում տղայի ընկերոջը*:

Վ ածանցի սխալ գործածության մասին: Կրավորական *վ* ածանց կարող են ստանալ միայն ներգործական սեռի բայերը և վերածվել կրավորական կամ չեզոք սեռի բայերի: *Նախանձել, տուժել, սրտնեղել, նիհարել* բայերը չեզոք սեռի են և հետևաբար *վ* ածանց ստանալ չեն կարող, ուստի *նախանձվել, տուժվել, սրտնեղվել, նիհարվել* բայերը սխալ կազմություններ են:

Սխալ են նաև *ես խոստովանվեցի, բռնվեցի ձողից, կայնվեցի քեզ հետ, դու անընդհատ կրկնվում ես* կազմությունները:

Անչափ շատ է տարածված **մեղանչել**¹ բառի սխալ գործածությունը (այդ թվում՝ բավականաչափ գրագետ մարդիկ) կարծում են, թե *մեղանչել*-ը մեղա գալ՝ զղջալ, մեղքը քավել է նշանակում: Այնինչ ճիշտ հակառակն է, *մեղանչել* նշանակում է մեղք գործել, հանցանք կատարել: *Մեղանչել*-ից ունենք *մեղանչում* գոյականը, որ առավելապես այլ խոսքաշարերում է կիրառելի. «Անհանդուրժելի են լեզվական մեղանչումները (= սխալները, վրիպակները)»:

Մեղա գալ-ը *մեղանչել* բառի հականիշն է, որ նշանակում է *ափսոսալ, զղջալ*:

Հանձին- հանձինս²: *Հանձին* կապը դրվում է եզակի թվով բառի հետ, *հանձինս* կապը՝ հոգնակի թվով բառի հետ: Իմաստով նույնն է, ինչ *քեմս*-ը, որը, սակայն, գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով բառերի հետ: Ուրեմն ուշադիր լինենք և ճիշտ գործածենք՝ *հանձին ուսուցչի, հանձինս ուսուցիչների, հանձինս մոր և մանկան*:

Հուսով- հույսով: *Հույս* բառի գործիական հոլովի այս երկու տարբերակներն էլ ճիշտ են, եթե ճիշտ տեղում ենք գործածում: *Հուսով*-ը *եմ* օժանդակ բայի հետ է հանդես գալիս: «Ես հուսով եմ, որ

¹ Տե՛ս Գալստյան Հ., Ճիշտ և սխալը, Երևան, 2007, http://grapaharan.org/%D5%83%D5%AB%D5%B7%D5%BF%D5%A8_%D5%A5%D6%82_%D5%BD%D5%AD%D5%A1%D5%AC%D5%A8:

² Նույն տեղում:

կարծիքս կքննարկվի»: *Հուսով եմ*-ը հավասարօրէք է *հույս ունեմ*-ին: Այսինքն՝ նախադասության մեջ առանձին ստորոգյալ է դառնում: Իսկ *հույսով*-ը՝ իբրև գործիական հոլովով գոյական, նախադասության մեջ ստորոգյալի լրացում է դառնում՝ պատասխանելով *ինչո՞վ* կամ *ինչպէ՞ս* հարցերին. «Հուսով սպասում է, հույսով է ապրում»:

Ակնոց, թե՛ ակնոցներ: Ճիշտ են երկու բառաձևերն էլ, միայն թե ճիշտ գործածելու դեպքում: Եզակի թվով գոյականը՝ *ակնոց*, ցույց է տալիս 1 առարկա. *ակնոցս մոռացել եմ, ակնոց՞ ես դնում*, իսկ երբ խոսքը վերաբերում է հոգնակի թվով գործածությանը, ճիշտ է *ակնոցներ՝* 1-ից ավելի առարկաներ, գործածությունը՝ *Խանութում ակնոցների մեծ ընտրանի կա*:

Շնորհիվ – պատճառով: Ժամանակակից հայերենում 2 կապերն էլ ըստ էության նույն գործառույթն ունեն, բայց ոճական – իմաստային տարբեր նրբերանգներով:

Շնորհիվ-ը գերազանցապես գործածվում է դրական իմաստ արտահայտելու համար՝ *աշխատասիրության շնորհիվ, օգնության շնորհիվ...*

Պատճառով-ը կա՛մ ընդհանրական՝ չեզոք երանգ ունի, կա՛մ բացասական: Օրինակ՝ *հիվանդության պատճառով, փող չունենալու պատճառով* և այլն:

Ավելացնենք, որ եթե *պատճառով*-ը միշտ կապվող բառից հետո է դրվում, ապա *շնորհիվ*-ը երկդիր կապ է. կարող է լինել և՛ հետադաս, և՛ նախադաս:

Բառաձևի սխալներ

Բառաձևերի աղավաղումները, ըստ տարածվածության աստիճանի, լինում են անհատական և ընդհանրական: Լեզվական ամեն մի շեղում, ըստ երևույթին, սկսվում է առանձին մարդկանց կողմից և հետո միայն, խոսողների ավելի ու ավելի լայն շրջանակներ ընդարձակելով, դառնում ընդհանրական: Սրա դեմ պայքարելու հիմնական եղանակը նույն անհատական ջանքերի գնով ճիշտ, անխաթար ձևերին վերադառնալու ուղին է:

Ընդհանրական սխալները տարաբնույթ են՝ ակնհայտ աղավաղումներ, որ գիտակցվում են փոքրիշատե գրագիտություն ունեցող մարդու կողմից, և այնպիսի վիպակներ, որոնք միայն մասնագետը կարող է գիտակցել:

Բառաձևի խաթարումների պատճառները բազմապիսի են: Դրանց մի մասը պայմանավորված է առավելապես արտասանական - հնչական շեղումներով, մյուսները կարող են առաջ գալ բառակազմության կանոնների անտեսման, բառի առանձին բաղադրիչների թյուրըմբռնման, քերականական ինչ-ինչ օրինաչափությունների խախտման հետևանքով և այլն: Երբեմն նշված մի քանի գործոններ կարող են միաժամանակ դեր խաղալ:

Նշենք բառաձևերի առավել հանդիպող սխալ գործածության դեպքեր.

- *Սմանչել, կամանց, կանանչ, բարձրունք* բառերում սխալմամբ ներմուծվել է և աճականը, *բարձունք*-ի մեջ բարձր արմատաբառի *բարձ* փոփոխակն է՝ բարձ+ունք, ուստի սխալ է *բարձրունք*-ը³:
- Բավական հաճախ են նկատվում ն-ի սխալ գործածության դեպքեր (*միևնույն*-ին վերագրվող *ն-ի* սխալ գործածությունները, ինչպես նաև *ինչպիսի, այսպիսի, այդպիսի, այնպիսի* դերանուններին սխալմամբ վերագրվող երկու –**ն**-երը)⁴:

³ Նույն տեղում:

⁴ Առավել մանրամասն տե՛ս Լեզվի կոմիտե, Նորահայտ սխալներ, <https://www.langcom.am/%D5%B6%D5%B8%D6%80%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF-%D5%BD%D5%AD%D5%A1%D5%AC%D5%B6%D5%A5%D6%80/>:

- Հաճախ ավելորդ *ը/ն* են կցում *թարւմ, խոր* բառերին (*թարւմը ձուկ, թարւմը հաց, խորը հոգի*). *թարւմը, խորը* ձևերը ճիշտ կլինեն միայն փոխանվանաբար գործածելիս. «Թարւմը (=թարւմ ձուկը, թարւմ կանաչին) տու՛ր, խորը (=խոր չափով) մտածիր»:
- Երկփոփոխակ՝ *ը/ն* հոդով են հանդես գալիս *սառը* կամ *սառն*, *խառը* կամ *խառն*, *դառը* կամ *դառն*, *ընդհակառակը* կամ *ընդհակառակն* բառերը (առանց հոդերի ձևերը գրական չեն): Իսկ *ընդամենը* բառը միայն *ը* հոդով է ճիշտ:

Հաճախ հանդիպող սխալ բառաձևեր են թվականների սխալ կիրառությունները: Այսպես՝

Մխալ	Ճիշտ
Ութանասուն	ութսուն
տաս (10)- տասմեկ, տասհինգ տասը	տասնմեկ, տասնհինգ
Յոթներորդ	յոթերորդ
Ութնամյա	ութամյա
զերո, զերոյական	զրո, զրոյական

Միայն *յոթանասուն*-ի մեջ ունենք *յոթ+ան* (գրաբարյան *յոթն*, սեռականը՝ *յոթան* (=յոթի) հոլովական մասնիկը, իսկ մնացածներում արմատական թվերին ավելացել է *սուն* («տասնյակ») ածանցը): Ուրեմն, ճիշտ են *ութ+սուն-ութսուն* և դրանից կազմված թվերը: *Տասը* թվականը լինում է *տասը/ տասն*: Բաղադրյալ բառերում, որոնցում գերազանցապես հանդես է գալիս *տասն* ձևով (*տասնմեկ, տասներորդ, տասնադի*), երբեմն հանդիպում է *տասս* ձևով՝ *տասսանիշ, տասսատորյակ, տասս-տասներկու*: Մնացած թվականները, եթե փոխանվանաբար չեն գործածվում, *ը/ն* չեն ընդունում: «Ձերո» ձևը, որ ֆրանսերենից է անցել ռուսերենին, նաև արևմտահայերենին, արևելահայ գրական տարբերակի համար անընդունելի է: Ճիշտ է *զրո, զրոյական*:

Չի կարելի չանդրադառնալ թե՛ դպրոցականների, թե՛ մեծահասակների շրջանում բառագործածության չափազանց տարածված հետևյալ սխալներին.

Մխալ	Ճիշտ
Համբյուր	համբույր
Ողջուն	ողջույն
Եղբոյր	եղբոր
Ուխտադրույժ	ուխտադրուժ
Սյունյակ	սյունակ
Աղյուսյակ	աղյուսակ
Պատճե	պատճեն
Ֆիդային	ֆիդայի
Վարքաբեկել	վարկաբեկել
Այլոք	այլք
Դյութագուն	դյուցագուն

Համբյուր-ի կազմությունը, ինչ խոսք, չի համապատասխանում գիտական ստուգաբանությանը, ճիշտ է, հեշտ է մտապահել դրա ուղղագրությունը՝ որպես համ+ բույր մերձավոր բառերի կցում, բայց և այնպես պարզ է:

Ուխտադրուժ բառի մեջ ունենք *ուխտ* և *դրուժ* արմատները, *դրույժ* բաղադրիչ առհասարակ գոյություն չունի, եղել է *դրուժ*, որից էլ՝ *դրուժան* (=դրժող):

-*Ցակ* ածանցը հանդիպում է թվային ամբողջություն ցույց տվող բառերում՝ *տասնյակ, հարյուրյակ, եռյակ*, նաև՝ *հնգյակ, տասնամյակ* և այլն: Իսկ *սյուն, աղյուս* արմատաբառերին ավելանում է *-ակ* նվազական ածանցը, ուստի ճիշտ չեն *սյունյակ, աղյուսյակ* ձևերը:

Դյուցագուն բառի խաթարված *դյութագուն*-ը առավել շատ տարածված է դպրոցականների մոտ: Այն հավանաբար կապվում է *դյութել-դյութիչ* բառի հետ: Պետք է ուղղակի հիշել, որ *դյուցագ-*

ում բառի հիմքը *դից*-ն է (բառացի՝ «աստվածների»), որի մի փոփոխակն է *դյուց*-ը, *դյուց* + *ազն*, որը նշանակում է աստվածների զարմից սերված:

Վարկաբեկել նշանակում է վարկը՝ հեղինակությունը բեկել՝ կոտրել, ընդհանուր իմաստով՝ հեղինակագրկել, անվանարկել, խայտառակել, այնինչ *վարք*-ը ապրելաձևն է, կենցաղավարությունը:

Այլք սխալ բառաձևը անկասկած հորինվել է «այլոց»-ի («ուրիշների») նմանողությամբ՝ որպես թե դրա ուղղական ձև: Այնինչ դրա ուղիղ ձևն է *այլք* (= *այլեր*, *ուրիշներ*): Գրաբարի հոգնակին սեռականում ունենում է *-աց*, *-ոց* հոլովիչներ՝ *միտք>մտաց*, *գիրք>գրոց*, *այլք>այլոց*:

Հեռուստաթերից և առհասարակ շատ հաճախ հնչող անհանդուրժելի սխալ բառաձևեր են **ի շնորհիվ**, **ի օգուտ**, **ի ուրախություն**, **ըստ արժանավույն**, **սրբության սրբոց** և այլն: *Ի* նախդիրը իր որոշակի գործառույթն ունի, օրինակ, *ի փառս*, *ի պատիվ*, *ի հեճուկս* կառույցներում (ի փառս = փառքի համար...): Գրաբարում ձայնավորով սկսվող բառերից առաջ *ի*-ն փոխակերպվել է *հ*-ի (ի>յ>հ>) և գրվել բառին կցված՝ *ի անուն* > *յանուն* > *հանուն*, նույնկերպ էլ՝ *ի օգուտ* > *հոգուտ*, *ի ուրախություն* > *հուրախություն*, այսինքն՝ *ի*-ով ձևերը սխալ են:

Ըստ արժանավույն-ը ճիշտ է միայն այս գրաբարյան կաղապարով, իսկ **ըստ արժանավույն**, կամ առանձին **արժանավույն** կամ **արժանավույն կերպով**, **ըստ արժանավույնս** գործածությունները աղճատված ձևեր են:

Չենք կարող անտարբեր անցնել նաև **փախնել**, **թոնել**, **ասել**, **ասեցի**, **խոսացի**, **խոսացած**, **խոսացնել**, **խոնավացնել**, **մզեցված** և այլ սխալ բայաձևերի կողքով: *Ն*, *չ* ածանցներով նշված ձևերը՝ **փախնել**, **թոնել**, **սառել**, այնքան մեծ տարածում են գտել, որ հավակնում են ճիշտ՝ օրինական ձևեր համարվելու: Սակայն առայժմ դրանք ոչ դրական՝ մերժելի բառաձևեր են: Ուրեմն, հետևողականորեն ուղղենք՝ **փախչել**, **թոչել**, **սառչել**, իսկ հարկ եղած դեպքում *չ*-ի անկումով կազմենք համապատասխան բայաձևեր՝ **փախա**, **թոա**, **սառել** և այլն:

Պետք է հիշել, որ **ասել** բայը անկանոնություն է դրսևորում անցյալ կատարյալում և խոնարհվում *ա* խոնարհման բայերի օրինակով. ոչ թե **ասեցի**, այլ **ասացի**, հրամայականում ոչ թե **ասեցե՛ք**, այլ **ասացե՛ք**:

Խոսել բայը՝ որպես է խոնարհման պարզ բայ, հարակատարում պիտի ունենա **խոսած** ձևը, իսկ պատճառականը պիտի կազմվի **եցն** և ոչ թե **ացն** ածանցով՝ **խոսեցնել**: Նույն կերպ **խոնավ+ան+ալ** **–խոնավացնել**, **մզ+ան+ալ** **–մզացնել**, **մզացված** ճիշտ ձևերի փոխարեն զարմանալիորեն գործածվում են **խոնավեցնել**, **մզեցնել** սխալ բառաձևերը:

Քերականական կապակցության սխալներ

Դրանք պայմանավորված չեն բառիմաստով կամ խոսքային իրադրությամբ, կապակցության մեջ առանձին-առանձին բառերը կարող են լիովին ճիշտ լինել, սակայն չպիտի խախտվեն նաև դրանց քերականական փոխհամաձայնության՝ մեր լեզվի առանձնահատկություններով պայմանավորված կանոնները:

Հոլովառության սխալներ: *Մոտ*, *վրա*, *հետ*, *պես*, *նման*, *համար* կապերը I և II դեմքի անձնական դերանունների հետ դրվելիս առաջ են բերում զուգաձևություններ՝ *իմ մոտ*– *ինձ մոտ*, *իմ համար*– *ինձ համար*, *քո վրա*– *քեզ վրա* և այլն: Գրական հայերենում ճիշտ ենք համարում սրանց II տարբերակները, որոնցում դերանունները գրականաձև են:

Հիշենք, որ *մոտ*, *վրա* կապերը թեքվելու դեպքում՝ *մոտի*– *մոտից*– *մոտով*, *վրայից*– *վրայով*– *վրայի*, դերանվան տրական հոլովը փոխվում է սեռականի՝ *մեզ մոտ*, *բայց*՝ *մեր մոտից*, *մեր մոտով*, *քեզ վրա*, *բայց*՝ *քո վրայի*, *քո վրայից*:

Արդի հայերենում սխալ է համարվում անձնական դերանունների և *ու, դ* ստացական հոդերով գոյականների համատեղ գործածությունը՝ *իմ գիրքս, քո հորդ*: Սրանց փոխարեն ունենք 2 գուգաձև՝ *իմ գիրքը- գիրքս, քո հորը- հորդ*:

Դպրոցականների շրջանում տարածված սխալներ են խոսքում անորոշ դերբայի սխալ գործածության դեպքերը:

Այսպես՝

Ուզում եմ գնամ տուն:

Փորձի՛ր հասնես նրան:

Պատրաստվի՛ր հյուրերին ընդունես:

Խուսափում են իրար հետ խոսեն:

Գրական հայերենի հստակ կանոններից մեկն այն է, որ միևնույն նախադասության մեջ միայն մեկ բայ կարող է դիմավոր լինել (չհաշված բազմակի ստորոցյալները և գուգադիր բայերը):

Հետևաբար, պետք է ճշտենք՝

Ուզում եմ գնալ տուն:

Փորձի՛ր հասնել նրան:

Պատրաստվի՛ր հյուրերին ընդունելու:

Խուսափում են իրար հետ խոսելուց:

Հարց է ծագում. իսկ ինչպե՞ս իմանալ՝ անորոշ դերբայի որ հոլովով է դրվելու երկրորդ բայը: Դա դժվար չի լինի, եթե մտաբերեք բայի խնդրառությունը: Հարցի միջոցով կպարզենք տվյալ դիմավոր բայի պահանջած լրացման (դերբայի) հոլովաձևը. ուզում եմ (ի՞նչ – ուղղ. հոլով) գնալ, տեսնել, հասնել..., պատրաստվել (ինչի՞)՝ ընդունելու, դիմակայելու.... խուսափել (ինչի՞ ց-բացառական) խոսելուց, վիճելուց.... «Մի՛ վախեցեք կեղծի մասին ճիշտ գրելուց» (Պ. Սևակ): Մի՛ վախեցեք (ինչի՞ ց-բացառական):

Չենք կարող չնշել նաև շաղկապի սխալ գործածության դեպքերից: Այսպես՝ միանշանակ պետք է հիշել, որ համադասական գուգադիր շաղկապները նշված ձևերով են ճիշտ՝ *ոչ թե... այլ, ոչ միայն... այլև, այլ նաև*: Սխալ են՝ *Այս անգամ սխալ էր ոչ թե Տիգրանը, այլև (փոխանակ՝ այլ) նրա մտերիմ ընկերը*: Կամ՝ *Հրավերքին ներկա էին ոչ միայն բարձրաստիճան հյուրեր, այլ (փոխանակ՝ այլև կամ այլ նաև) եկեղեցականներ*: Պետք է հիշել, որ *ոչ թե...., այլ-ը* արտահայտում է հակադրություն և ժխտում միաժամանակ, իսկ *ոչ միայն...., այլև-ը* կամ *այլ նաև-ը՝ հակադրություն և հավելում* իմաստները:

Հաճախ սխալների տեղիք է տալիս բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող *որպեսզի* շաղկապը: Մեկընդմիջտ պետք է իմանալ, որ *որպեսզի*-ն ունի միայն նպատակի իմաստ ձևավորելու գործառույթ: Եվ չի կարելի *որ-ի* փոխարեն գործածել *որպեսզի* շաղկապը, եթե այն նպատակի պարագա չի դառնում:

Այսպես՝

Սխալ

Ես ուզում եմ, որպեսզի հանդիպենք:

Պահանջում է, որպեսզի արդարությամբ քննվի գործը:

Ճիշտ

Ես ուզում եմ, որ համնդիպենք:

Պահանջում է, որ արդարությամբ քննվի գործը:

Այս կառույցներում աներկբա է *որպեսզի*-ների ռուսերենի *чтобы*-ի ուղիղ պատճենումը, որն անընդունելի է հայերենի քերականության մեջ: Վերոբերյալ նախադասություններում ստորադաս նախադասություններից ոչ մեկը նպատակի պարագա չէ: Դրանք կատարում են ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոն: Նպատակային հարաբերություն կարտահայտեր, եթե պատասխաներ

գերադաս նախադասության ստորոգյալի *ինչի՞ համար, ի՞նչ նպատակով, ինչո՞ւ* հարցերին: Օրինակ՝ *Տղան ժամանակին եկավ տուն, որպեսզի դիմավորեր հյուրերին: Մեկնեցի արտասահման, որպեսզի այնտեղ թոթափեի ամիսների հոգնածությունս:*

Համաձայնության սխալները: Մի մասը գն^օւմ է, թե՞ գնում են: Խնձորների կեսը փչացե՞լ է, թե՞ փչացել են: Հայերենում եզակի ենթակայի հետ գործածվում է եզակի ստորոգյալ, հոգնակի կամ բազմակի ենթակաների հետ՝ հոգնակի ստորոգյալ: *Մի մասը* և *կեսը* ենթակաները դրված են եզակի թվով, հետևաբար ստորոգյալն էլ պիտի լինի եզակի. *մի մասը գնում է, կեսը փչացել է:* Այստեղ հաշվի չի առնվում բառիմաստը, որովհետև համաձայնությունը քերականական երևույթ է, և բառի արտահայտած իմաստը դեր չի խաղում:

Պատվերներ ընդունվո՞ւմ է, թե՞ ընդունվում են: Ամեն քայլափոխի հանդիպում ենք նման հայտարարությունների.

Ընդունվում է գլխարկի պատվերներ:

Պահանջվում է կարող բանվորներ:

Վաճառվում է երթևեկության կտրոններ:

Կատարվում է վերանորոգումներ:

Այստեղ շփոթություն առաջացնում է այն, որ նախադասությունները կրավորական կառուցվածքի են, որոնցում տրամաբանական ու քերականական ենթակաները նույնը չեն, տրամաբանական ենթական են այն կետերը, որոնք հայտարարում են, քերականական ենթականեր են *պատվերներ, բանվորներ, կտրոններ, վերանորոգումներ*, որոնց հետ էլ ստորոգյալը պիտի համաձայնի, դրվի հոգնակի թվով:

Ընդունվում են պատվերներ:

Պահանջվում են բանվորներ:

Վաճառվում են կտրոններ:

Կատարվում են վերանորոգումներ:

Միսալ է նաև՝ *Վաղը սպասվում է ամպրոպ, անձրև, տեղ-տեղ՝ թաց ձյուն հայտարարությունը:* Ճիշտ է՝ *Վաղը սպասվում են ամպրոպ, անձրև, տեղ-տեղ թաց ձյուն:*

Կարելի՞ է նվազել դաշնամուրի վրա: Ո՛չ, իհարկե: Որովհետև *նվազել* բայը ներգործական սեռի է և պահանջում է ուղիղ խնդիր՝ *ի՞նչ նվազել*- դաշնամուր նվազել: Նույն կերպ՝ *նվազել ջուրակ, դուդուկ, շվի* և այլն: Իսկ եթե որևէ բան են նվազում, ապա *դաշնամուրը, ջուրակը, դուդուկը, շվին* դառնում են միջոցի խնդիրներ, ինչպես՝ դաշնամուրով նվազել սոնատ, դուդուկով նվազել մեղեդի և այլն:

Մակաբույծ բառեր: Երբեմն խոսքում գործածում ենք այնպիսի բառեր, որոնք ոչինչ չեն տալիս, ոչինչ չեն հաղորդում և փաստորեն ավելորդ են, մակաբույծ, քանի որ անտեղի խլում են տեղ, ժամանակ: Օրինակ՝ *Աշունը դա իմ ամենասիրած եղանակն է: Փարիզը դա սիրո մայրաքաղաքն է:* Օրնակներում *դա*-ն ոչ միայն մակաբույծ է, ավելադրություն, այլև խորթ է հայերենին և աղավաղում է նախադասությունը: Դա անշուշտ գալիս է ռուսերենից՝ ուղղակի պատճենման հետևանքով, ինչպես՝ *Осень- это моя любимая погода:*

Հաճախ մակաբույծ է դառնում *իր* դերանունը: Երբեմն ասածը տպավորիչ դարձնելու նպատակով գործածում են՝ «Ես իմ աչքերով տեսել եմ, իմ ականջներով լսել» կամ «Բաֆֆին իր «Սամվել» պատմավեպում պատկերում է...»: Դրանցում միանգամայն ավելորդ է *իր* դերանունը, քանի որ Բաֆֆին ուրիշի վեպում չէր կարող պատկերել կամ «Ես»-ը ուրիշի աչքերով չէր տեսնի, ուրիշի ականջներով չէր լսի:

Ուստի անհրաժեշտ է մեկընդմիջտ վտարել այդ մակաբույծ բառերը մեր բառապաշարից:

Եզրակացություն

Լեզվական սխալներն ուսումնասիրելիս մեր ուշադրության կենտրոնում ի սկզբանե եղել ու մնում են ՁԼՄ-ները՝ որպես հայոց լեզվի ամեագործուն, լավ ու վատ խոսքն ամենից արագ տարածող միջոցներ:

Ժամանակին բավական լեզվական սխալներ ընկրկել էին Լեզվի կոմիտեի կողմից կազմված «սխալների ամփոփագրերի», անդադար բարձրաձայնվող ահազանգերի, լրագրողական հոդվածների դեմ: Կար ժամանակ, որ տպագիր մամուլը բավական մաքրվել էր լեզվական սխալներից, իսկ եթերը՝ նաև ռուսական և ամերիկյան առողջամտությամբ հայերենից: Բայց ահա մեր կյանքի անքակտելի մասը կազմվող էլեկտրոնային մամուլը վերստին խաթարեց մեր լեզվի անաղարտությունը: Համացանցը սխալների մեծ հոսք բերեց, և թվում է՝ այլևս ոչինչ ի գորու չէ տեղի տալու լեզվական սխալների հորդահոս ընթացքին:

Դիմում ենք հայոց լեզվի դասագիրք, ձեռնարկ, հարցերի շտեմարան գրող բոլոր մեծարգո մասնագետներին, որոնք կոչված են ազգապահպան առաքելության:

Ձեր նվիրական գործը ի կատար ածեք առաջին հերթին աստվածային հայերենի ակունքներին վերադառնալու, ոչ թե արժեքավոր համարվող անարժեք ժառանգություն թողնելու համար:

Անկասկած է, որ ամեն սկիզբ ունի վերջ, և ամեն վերջ մի նոր սկիզբ է, մեր այս օրերի լեզուն կարող է վերադարձի առաջին քայլ դառնալ, եթե համարձակություն ունենաք խոստովանելու, որ մինչև այսօր լեզուն կարող է վերադարձի առաջին քայլ դառնալ, եթե համարձակություն ունենանք խոստովանելու, որ մինչև այսօր հիմնականում կորցրել ենք, և սակավ են ձեռքբերումները:

Գուցե որպես սկիզբ անհրաժեշտ է վերընթերցել, ուսումնասիրության նյութ դարձնել ազգային բանահյուսությունը հիմնական դպրոցում, սովորել և սովորեցնել հայերեն մտածել և հաղորդակցվել, անցնել գործնական քերականության՝ առանց ակադեմիական սահմանումների, նպատակների թվացյալ իրագործման, առանց խրթին եզրույթների բերանացի պարտադրանքի (հիշենք, որ մեր տատիկ-պապիկներն ավելի գրագետ լեզվամտածողություն ունեին, խոսքն ավելի գրագետ էին կառուցում, քան տարիներ շարունակ կանոն ու սահմանում սերտող ներկայիս սերունդը), իսկ քերականական ձեռնարկների ուսումնասիրությունը թողնել ավագ դպրոցում և խորացնել համապատասխան բուհում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գալստյան Հ., Ճիշտը և սխալը. բառագործածության, բառաձևի և կապակցական սխալները հայերենում, Երևան, Չանգակ- 97, 2007:
2. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա., Երևան, ԵՊՀ, 2014:
3. Լեզվի կոմիտեի հորդորակներ:
4. Խաչիբաբյան Ն., Քերականական սխալներն արդի հայերենում: